

ՅԵՍՈՒՆ ՏՆՐԻ ԸՌԱՋ

ՍՐԲՈՑ ԾԱԿՈՒԲԱՆՑ ՏԱՃԱՐԻ ՁԱՆԳԱԿԱՍԱՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ

Ս. Յակոբեանց Մայր Տաճարի փայտաշէն անշուք զանգակառուներ բոլորովին հինցած ըլլալով, Պէթօն-Արմէնով ի նորոյ շինուեցաւ, յար և նման Ս. էջմիածնի զանգակառան կաթողիկէին:

Շինութեան ճարտարապետն էր Երսու-տաղէմացի Մեծայարգ Տիար Մերկոյ Մերկերեան և հսկողը նոյնպէս Երսուտաղէմացի Մեծայարգ ճիար Գէորգ Սահակեան: Անոնք ամէն ջրանք նուիրեցին զանգակառան վայելուչ և ճաշակաւոր կառուցումին համար, և շինութեան ամբողջ ծախքը իրենց հոգացին հաւատարմապէս, ի յիշատակ իրենց քարեպաշտօն գերդաստաններու ննջեցեալներուն:

Այս առթիւ, Ս. Աթոռոյս Գառ. Տեղապահ Գերշ. Տ. Մեսրոպ Սրբազանի կողմէ օրհնութեան և գահաւանդութեան մէջ մէկ գիր ուղղուեցաւ վերայիշեալ բարեկէր և եկեղեցաւոր ուղգայիններուն:

(«Սիոն», 1931, Ե. Տարի, Մարտ,
(Թիւ 3, էջ 96)):

Ս. ԿԻՐԱԿՈՍ ՄԱՆԿԱՆ ՄԱՍՈՒՆՔԸ

Վսեմ. Արմենակ Պէյ կամսարական Աղեքսանդրիոյ մէջ պատահական վաճառող մը գնած ըլլալով Ալի մը մէջ ամփոփուած մանուկ Ս. Կիրակոսի մասունքը, Եղիպտոսի Առաջնորդ Գերշ. Տ. Թոր-գոմ Արքեպս. ի (Դուշակեան, հետաքային Գառիարա Ս. Աթոռոյ, Ե. Խ.) խնդրաւ նոց վրայ, նուիրեց Ս. Յակոբեանց Տաճարին:

Տ. Թորգոմ Արքեպս. ի այս առթիւ Գերշ. Գառ. Տեղապահ Սրբազանին ուղղած նամակէն քաղելով կու տանք Ալին նկարագրութիւնը.

«Ալին երկարութիւնն է իբր 30 սանթրիմ, վերնամասը, այսինքն դաստակին վերի ծայրը ունի 14 սանթրիմնոց շրջա-

նակ մը. որ կը վերջաւորուի 17 փերուք քարերով, ընդհուլուած ըստ մասին թեկնարի ապարանջանով մը, որ փակցուած է ազուցուած տեղին վրայ. նոյնպէսի ապարանջան մը փակցուած է նաև դաստակի վարի մասին վրայ, ընդհուլուած՝ միով պակաս 14 նոյնպէսի քարերով: Վերի ապարանջանին ներքե, երեք կարգ երկաթագիր տառերով փորագրուած է առ յիշատակարանը. ՍՐ. ԱՋՍ ՆՈՐՈՒԵ-ՑԱԻ ՁԵՌԱՄԲ ՄԵԼՔԻՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՈՒ ՍՐ. ՈՎԱՆԵՍԱՎ ՎԱՆԻՑՆ ՈՐ Է ԲԱԶՈՒԿ ՏՂԱՑ ՄԱՆՈՒԿ ՍՐ. ԿԻՐԱ-ԿՈՍԱ. ԹՎԻՆ ՌՄԳ (= 1754) ԱՄԻՆ: Իսկ ամէնէն վարի ծայրը փակուած է զմբէթաձև և պտուտակաւոր կափարիչով մը, որուն կողքոյն օղով մը հաստատուած է: Դաստակին վարի կէտին վրայ, ճակատի կողմը, կայ չեխն իւր բանուած Ս. Կայս մը, որ գիրկն ունի Յիսուս Մանուկը, և նստած է երկսիւն խաչածայր խորանի մը ներքե, Նիւթն է արծաթ ոսկիջրած, արուեստն է սոսե կիւղի: Դաստակին ափի կողմը քիչ մը ճմլուած կ'երևի:

Գերշ. Գառ. Տեղապահ Սրբազանը այս նուիրական ընծայարկութեան առթիւ օրհնութեան և շնորհակտութեան գիր մը ուղղեց Վսեմ. Արմենակ Պէյ կամսարականի:

ՔԵՄԱՆԶԻՍ ՌՈՒԲԵՆ

Երսուտաղէմ ալ ըստան ունեցաւ վայելելու Գէմանչիսա Ռուբէնի Էմմանչիին գիրքները:

Հանրային նուագահանդէսէն ետք, զոր տուաւ քաղաքիս մէջ, ուր մեծապէս գնահատուեցաւ ըլլալ Հրէական ըլլալ Արարական շրջանակներէ՝ ընդունելով անկեղծ և խանդավառ գնահատանքեր տեղական թերթերու մէջ, Պր. Ռուբէն մեծ հաճոյք պատճառեց նաև Սուրբ Աթոռոյս Միաբանութեան և զպրօցներու աշակերտութեան համար ալ զատ նուագահանդէս մը տալով Ժողովարարաց Վարժարանի սրահին մէջ, Բշ. 16 Մարտի երեկոյեան:

(«Սիոն», 1931, Ե. Տարի, Ապրիլ,
(Թիւ 4, էջ 135-136)):